11. ԾԱՂԿԱԾ ԲԱԽՁԱՆ

Ինըմ ա, չինըմ մին թաքավեր։ Էս թաքավերին ուրան պալատին առաչին մին մըեծ, բարը-նուբարավ լիգյը, ծառերավ, ծաղիկներավ լիգյը բաղ ա ինըմ։ Էտ բաղը էնքան լավ, էնքան կյեղեցիկ ա ինըմ, վեր անց կենողնին ծրեռքըերնին ճըկատին տըրած, վըեր արևը աշկըերնին ծրկծրկոտի վըեչ, եշրմ ին, եշրմ էտ բաղին, էլհա քըշտանըմ չին։

Վըեր կյարունքը յասամաննին պըենվըմ չա՞ր, վըետը աշխարքըս յոր ար օնըմ։ Էն սիպտակ նան մանիշակի ռանգյի յասամաննի՞ն... Բա վարթե՞ըը, ռանգյ-ռանգյ կյեղեցիկ, ասիս լհա՞ քաշովի յա՞, վըետը, էտ թաղա՞ պեցված վարթերին վըետը, աշխարքըս օնըմ ար։

Թաքավերը էնքան սկուպոյ ար, վեր ծրեռքին թըխիս կորեկ չար եր ընգնիլ, ծրեռքը՝ կարճ, լուզուն՝ էրգյան, հենց ար լհա՞ տըժոխկի տըռնապահ ինի՞, հենց տըզտոողըմ ար։ Էտքան բարեբան էտ դաղվածը վըեչ ինքն ար օտըմ, վեչ էլ թողըմ ար մին օրիշը օտի։

Մին հետ էլ մին ախկադ եկավ, մին բար օղից, ամմա թաքավերը ասից. — Տու վիր պակա՞ս, վըեր կյաս իմ բախչաս, բար օղիս օտիս։

Էտ ախկաղը անեսկ տըվավ, ասից. — Թող քու բաղըտ չուրանա, մին կանանչ ծառի հասրաթ մընաս, աշկըտ մընա մին բարի յրա։

Էտ անեսկանը յրետը թաքավերին բաղը յավաշ-յավաշ տըղնըմ ա, չուրանըմ։

Թաքավերը կըզնըվըմ ա, օգըմ ա, թա պըլանա, հրամմայըմ ա էտ ախկագին փըռնին պըերին ուրան կոշտը, վըեր կլոխը կըտրին, ամմա ծըռոտենքը հիշքան ման ըն կյամ, ճարըմ չըն։ Քոռըփրեշ-ման ետ ըն տրեռնըմ, կյամ պալատը։

Թաքավերը շատ ա մեթկ անըմ, քնենքյ անըմ ուրան բազին հետի։ Նա ուրան կոշտն ա կանչըմ մեծամեծներին, գիդնականնե-րին, վըեր մին ճար, մին հընար անին, վըեր բաղը-բախչան կընանչի։

Ըտրանք խորուրթ արին, խելք խելքի տըվին, թա. — Թաքա-վերը ապրած կենա, վըեր օգըմ ըս բաղը-բախչատ կընանչի, բիդի մին ժամ շինիս, վըեր ըտրա նմանը սաղ աշխարքըմըս ինի վրեչ։ Ժամը շինելանը ետը նի մըննիս մեչը, աղոթկ անիս։

Թաքավերը լավ-լավ ուստոց կանչիլ տըվավ, մին շատ ղա-շանգյ ժամ շինիլ տըվավ, նի մըտավ ժամը վըեր աղոթկ անե, աղոթ-կին կըեսըմը մին ղուրուլթու աշկին ըրվաց, ասից. — Շինիլ տըված ժամըտ շատ ղաշանգյ ա ուրան շենքավ-շընորքավը, ամմա մին պըեն պըկասըմ ա։

Թաքավերը օգըմ ա ըտրանա մին խորուրթ հըրցընի, մըեթկը գյիդա, ամմա ղուրուլթուն աշկին առաչան կորչըմ ա։ Թաքավերը շատ մըտածելանը ետը հրամման ա տամ, ժամը քանդին, թաղա-դան մին ըտրանա լավը շինին։ Ըսկսըմ ըն ժամը շինիլը էնքան ղա-շանգյ, պըեցուր, էնքան լավ, քարերը լհա կուրուժվավեր ինի՞, ասիս մին քաշած պատկյեր ինի՞ տական միչև կըլոխ, վըսկըվարաղ, պըծրպածի ընելիս, վըեսկե խաչըն էլ յրա՞ն։

Լհա վըեր շինըմ ըն, պըրծընըմ, թաքավերը նի յա մըննըմ, թա աղոթկ անի, վըեր բաղը-բախչան կընանչի, էլհա աղոթկին կեսըմը էտ ղուրուլթուն ըրվըմ ա, ասըմ. — Թաքավերը ապրած կըենա, լոխ շատ լավ ա շինած, քարերը թընգյանոց, լավ տաշած, կըրուժվավեր, վըեսկե խաչըն էլ յրան, ամմա էլհա մին պըեն ա պըկասըմ։

Էտ մունուտին թաքավերը ըտրա արմունգան փըռնըմ ա, ասըմ. — Ա՛յ պարի ծերունի, ասի տըեսնամ հի՞նչն ա պըկասըմ, հի՞նչ ասիս, կանիմ, հինչ օղիս, կըտա՞մ, թաքյ լհա բաղը-բախչաս կը-նանչի։

Էտ ծեր մարթը հրաժարվից ամմեն հինչան, ասից. — Վըեր օգըմ ըս բաղը-բախչատ կընանչի, բիդի վըսկըշափաղ, էն լավ յըեր-քող ղուշը, զառ բուլբուլը պըերիս, տինիս բաղը-բախչըմըտ, վըեր յըերքի, բաղըտ կընանչելու յա։ Ամմա ըտրան պերելի հետի շատ ըս ըրշարվելու։ Ըտրան պերողը պիտի անց կըենա չոր անապատնե-

րավ, տըժեր տըեղերավ, հըրեշներին մաշավը, մեյիդներին կըլխավը, սարավ, քոլավ, կյետավ, ծո̈րավ։ Ամմա լոխճան տըժերը զա̈ռ բո̈ւլբո̈ւլին յըերք ասել տալըն ա, վըեր յըերք ասից, դա̈ստի բաղըտ կընանչելու յա։ Էտ ղուրուլթուն ասըմ ա, էլհա կորչըմ։

Թաքավերը մընըմ ա մինա̈կ մըտածմունքի մըեջի։ Նա էնքան շատ ար մըտածըմ, քընեքյ անըմ, վըեր հալվալ-մաշվալ ար, չոր չոփ տըեռալ, հըլավավը մին տեռա՛լ։

Էտ Թաքավերը իրեք տըղա օնար։ Մըեծը նան միշնա̈կը անըմնին խելունք ին եր ըրալ, ամմա պուճուրին կյիժ ին ասըմ։ Էտ պուճուրը սաղ օրերը խաղ ար անըմ էն գյդոտանցը, խխորցը նըհետ, սաղ օրը տո̈ւսո̈ւմն ար ինըմ, Թակըմ, Թակվըմ, Թա̈վիլ տամ, պըլըրկընղրիկի տա՛մ, կըռըեվ անըմ, հախտըմ, հախտվըմ, կյեփերը ճըղոտըմ։ Իտի էլ մըծանըմ ա։ Հա̈րը կանչըմ ա իրեք տըղին էլ ո̈ւրա̈ն կոշտը, լոխ ասըմ, ո̈ւրա̈ն դա̈րդերը նաղլ անըմ, բաղին չուրանալին հըետի։

Մըեծ տըղան ասըմ ա. — Ա՛ հա̈ր, մըեր չուրացած բաղը կընըեչացնելի հըետի կողի հինչ ինի՛, կողի հըեռե տըեղ ինի՛, ճընապեքյն էլ փի՛ս, յըես կըքյինիմ զա̈ռ բո̈ւլբո̈ւլը պըերիմ։

Էն էրկու ախպերքն էլ ըսեցեն. — Ա՛ հա̈ր, մունք հինչա՞վ ընք պակաս, մունք էլ կքյինինք։

Իտի Թաքավերին իրեք տըղերքը ո̈ւրա̈նց զենքը-զըրահը, ճընապարին պաշարը յոր ըն օնըմ, իրեքան էլ ծի յըն նըստըմ, քյընըմ։

Քյընըմ ըն, քյընըմ, շատ ըն քյընըմ, խրեգյ ըն քյընըմ, շատ նան խրեգյը աստուծ ա դյուդըմ, անց ըն կենըմ հա̈լա̈ մարԹի վըեննը չի կոխած տըեղերավ, հա̈լա̈ մարԹի ծըեն լըսած վըեչ սարերավ, վըերջը հըսնըմ ըն մին տըեղ, ըշտըղան իրեք ճընապար ա տո̈ւս կյամ։ Ըտըեղ նստած ա ինո̈ւմ մին պառավ մարԹ։ Էտ պառավ մարԹին անա հըրցըփորց ըն անըմ, Թա էտ ճընապարնին ըշտըե՞ղ ա տանըմ։

Էտ պառավ մարԹը ասըմ ա. — Ա՛յ բալեք, առաշին նան էրկունջի ճընապարնին պարի յա, ամմա իրեքինշինը շատ շառ ա, ըտըղավ անց կենողը ետ չի տըեռնըմ։

Իրեք ախպերքը տըես մըտածեցին, տըեն մըտածեցին, վըեր մըեծ նան միշնա̈կ ախպերքը քյինին էն էրկու պարի ճընապարներավը, ամմա պուճուր ախպերը քյինի էն շառ ճընապարավը։

Իտի էլ անըմ ըն։ Մըեծ նան միշնա̈կ ախպերքը ուրխանըմ ըն, վըեր իտի իլա̈վ, համ ո̈ւրա̈նց չի մին պըեն ինիլ, համ էլ էտ կյիժ ախպորըն անա կազադվին։

Իրեքան էլ ուրուր խոսկ ըն տամ, վրեր հու շուտ ետ տրեռնա, ըտրեղ ըսպասի էն մնացած ախպորցը։ Ըտրեղ ուրուր պարի ճընապար ըն ասրմ, ամմեն մինը ուրան ճընապարրն ա ընգնըմ։

Մրեծ ախպերը քյինից, քյինից, վերչը հրսավ մին քաղաք։ Ինքը ուրան մրեթկ ըրավ, մրեթկ, վրերչը ուրան մրթկըմը ասից. «էլ հո՞ր ըմ քյընըմ, կլոխս բադի տամ, լավրն էն ա ըստրեղ մին կործի նի մրննիմ, ըստրեղ էլ կրենամ»։

Միշնակ ախպերը քյինից, քյինից, շատ չրրչտրվից, շատ տրժերոթունի քաշից, վրերչը մին քաղաքըմ մին մարթի տան ծառա նի մրտավ, ուրան պրերանը պրհելի հրետի։

Պուճուր ախպերը քյինից, քյինից, անց կացավ յաբանա չոլեր, քոլեր, անց կացավ անճանանչ տրեղեր, էրգյան ճրնապարնի, անց կացավ կյուլու կազանավ լիքը ծրմակնի, ծորեր, քոլեր, վրերչը հրսավ մին հենց վրեդի, վրեր ռանգյը կյարմուր ար։ Էտ կյարմուր վրեղավը քյինից, քյինից հրսավ մին մրեծ ամարաթի, վրեր վրեչ տոռնը օներ, վրեչ էլ ակուշկա։

Թաքավերին կուճի տրղան տես եշից, տեն եշից, թա տրեսնա, հո՞ւ վա ըտրեղ կրենըմ, պրեն չի տրեսավ։ Բիրդան աշկին մին կյեղեցիկ ախճիգյ ըրվաց, ըրեքնական է՛լ իվիլ վառ։

Էտ կյեղեցիկ ախճիգյը ըրմացած եշից էտ տրղին, ասից. — Ա՛յ խրեղճրկրակ, տու հո՞ւ վրս, վրեր ըստրեղ ըս յրեկալ, մեխկ ըս, շուտ ըրա փախի, թա չէ, էսա օշափը կյալու յա քյրեղ կոլ տա։

Էտ տրղան ասից. — Հալա նրհետտ խոսալ չըմ հալա կոշտտ ղոնաղ չըմ ընգալ, տու ինձ վրխցնըմ ըս, դե նաղլ ըրա տրեսնամ, բա տու հո՞ւ վրս, էս անտոռնը, անակուշկա ըրերթըմը հի՞նչ ըս անըմ։

Ախճիգյը նաղլ ըրավ, ասից, վրեր ինքը թաքավերի ախճիգյ ա, կյերի յա ընգալ կյարմուր օշափին ծրեռքը, վրեր կյարմուր օշափը ուրանց երգյիրը քանդալ ա, վրղրմոխրեր շինալ, լոխ մարթկանցը կրերալ, էտ մարթկանց արուանան էլ էտ վրեղը կյըրմըրալ ա։

Թաքավերին տրղան ասից. — Յրես վրեչ մին օշափա, պրենա վախըմ չըմ, յրես քյրեղ պիտի ազադիմ էս օշափին ծրեռքան, թողիմ վրեչ մինակ, անգար։ Ամմա խրնթրըմ ըմ ասի, թա ըշտրղավ ա կյալու էտ օշափը։

Մին էլ տրեսին աշխարքը գրղրդաց, վրեղը տրեղան տուրուր եկավ, էն մրեծ սարին կրլխան օշափը ըրվաց, փրնչալավ-մրոնչիլավ վրերսը առաչրն ըրած եկավ, բուրդան էտ տրղին տրեսավ, մին ինդի ծեներ հանից, վրեր ղուշ նան կազաննին սասան փախին, ուրանց կրլոխը ազադեցին։

Էտ օշափը իտի կըտաղած ասից. — Էտ հո՞ւ վըս, հո՞մնց ըս ընգալ ըստըեղ, անըմըտ հի՞նչ ա, ազկըտ հի՞նչ ա, գայիտ հո՞ւ վա, ղըփըլըտ հո՞ւ վա, հո՞ւր տըղա յըս, վըեր ինձանա վախտլ չըս, եկալ ըս հըսալ ըստըեղ։

Թաքավըերին պուճուր տըղան ասից. — Ցըես քյըեղ համար ըմ եկալ, վըեր քյըեզ փըշըցընիմ, քյըեզ ըսպանիմ։

Էտ խոսկըեքը լըսելավ օշափը կըտաղից, ՛րո՛նը կըլխավը տըվավ, աշկերը կյըրմըրից, պըրո՛նո՛ն կրրակ թափելավ յրա պըրծավ էտ տըղին, թա կոլ տա։ Էլհա աշխարքը գըղըրդաց, թոզը երգյինքյը հըսավ, էտ տըղան, էտ թոզըմը կորավ։

Օշափը գյիդա՛ց, թա տըղան կորավ, թոզ տըեռավ։ Մին քանի մուՆուտանը ետը թոզը վըեր թըմըղվից, օշափը տըեսավ, վըեր էտ տըղան սաղ-սալամաթ էն ա կաղնած։

Օշափը լափ կըտաղից, էրկունջի դո՛նըմը հիշքան ուժ օնար, յրա պըրծավ տըղին։ Աշխարքըս տուրուր եկավ, թոզը իրիքյնակին իրեսը ծասկից, օշափը էս դո՛նըմըս էլ մըղափուն եկավ էն տըղին, վըեր թոզ տըեռավ, վըեր ուրա՛ն պաժին չի մնաց, վըեր օտի։ Էլհա մին քանի մուՆուտանր ետը վըեր թոզը քաշվից, տըղան սաղ-սալամաթ ընդեղ կաղնած ծըծաղըմ ար։

Օշափը իրեքինջի դո՛նըմը ինդի՛ կըզնվից, ինդի՛ կըտաղից, փըրփըրից, վըեր էլ ավիլ չի, յրա պըրծավ տըղին։ Աշխարքըս թընդաց, ասիս լհա՛ թոփեր ինի տըրըքտրաքըմ, ըրոտըմ, թոզը արևին իրեսը ծասկից։ Օշափը գյիդա՛ց, թա էս դոնըմ տըղան թոզ տըեռավ, վըեր մըրթավըետ էլ չի մընաց։ Մուտացավ վըեր վըետ քաշի, տըեսավ տըղան տեմացը կաղնած։ Օշափը մընաց մաթ մընացած։

Թաքավերին պուճուր տըղան ետ տրեռավ, ասից. — Դե մըհեկ նոբաթը ի՛մն ա, մըհեգյ յըես պիտի քյըեզ ճըռթըփըշուր անիմ, մըեծ պատառըտ անգուճըտ թողիմ, պո՛ւռթ տամ, պեմբա՛կ կյիզիմ։

Ասիլը նան սորավը թըխիլը մին իլա՛վ։ Օշափը եր ընգավ, սատկից։ Էտ տըղան ըտրա անգուճնին կըտըրից, եր կալավ, տարավ էն ըխճըկանը նշանց տա, վըեր էտ ախճիգյը գյիդա՛, հըվատա վըեր օշափը սատկած ա։

Էտ ախճիգյը վըեր տըեսավ, ուրխացավ, ընգավ տըղին խըտետը, պըշպըշո՛րից, ասից. — Դե մըհեգյ եք փըսակվինք, վըեր տու ինձ ազագեցիր։

Էտ տըղան ռազի չի կացավ։ Ասից. — Ցըես հա՛լա՛ մին նըպատակ օնիմ, մինչև էտ նըպատակը կադարիմ վըեչ, փըսակվելու չըմ, վըեչ

էլ տոն ըմ քյընալու։ Ցրես հալա բիդի քյինիմ զառ բուլբուլը պըերիմ, վըեր մըեր բաղը, բախչան կընանչի։

Էտ ըխճըկանը աշկը վախից, վըեր էտ տըղան ինգի փիս ճընապարներով պիտի քյընի, վըեր քյընացողը ետ չի կյամ։

Տըղան էտ ըխճըկանը սըերտ տըվավ, վըեր վախի վըեչ, արխային ըրավ, ասից. — Տու ըստըեղ կաց, միչև յըես կըկյամ, քյըեզ յոր օնիմ, քյինիմ։

Տըղան էլհա ճընապար ընգավ, քյինից։

Քյինից, քյինից, ընգավ փիս-փիս տըեղեր, հըսավ մին ռանգյը սըեվ վըեղի։ Քյինից տըեսավ մին պըեցուր ամարաթ, ակուշկեքյը տըոնները փակ։

Էտ տըղան ամարաթին դըրբըղան պըեց ըրավ, նի մըտավ, տըեսավ մին շատ կյեղեցիկ ախճիգյ ըրվաց, հունցը մին պըլլորած լուսընդյա։

Էտ ախճիգյը վըեր տըղին տըեսավ, շատ տըխրվից, ասից. — Ա՛յ տըղա, տու հո՞ւ վըս, ըշտըեղա յըս եկալ, էս ա սըեվ օշափը կյալու յա, շուտ ըրա փախի, թա չէ, քյըեզ կոլ ա տալու։ Կողի կյարմուր օշափին ղազաբան անց ըս կացալ, ամմա սըեվ օշափը ընդրա նըման չի, մին օզգյա բաբաթ ա, հըեռաց, քյինի... Տու կարիլ չըս ինձ շոնա, կյուլա, օշափա աղագիս...

Էս վըեր ըստի յա ասըմ, թաքավերին պուճուր տըղին քյեփին նի յա կյամ, ասըմ ա։— Ա՛յ նախշուն ախճիգյ, հալա ինձ ղոնաղ չըս ըրա՞լ, հալա մին քախծըր խոսկ չըս ասա՞լ, ինձ ծըեր օշափավը վըխցընըմ ը՞ս։ Դե հո՞ւնց անիմ, ըշհանամը թա սըեվ օշափը կկյա, ինձ օտի, գյոռը, իստիբուշաղը, մին օր ծընվալ ընք, մին օր էլ կմըեռնինք։ Մինակ նաղլ ըրա, թա տու հու վըս, կըլոխըտ հինչ ա եկալ, օշափը ըշտըղավ ա կյալու։

Ախճիգյը լաց ինիլավ նաղլ ըրավ, վըեր ինքյը թաքավերի ախճիգյ ա, օշափը եկալ ա ուրանց երգյիրը քընդրքար ըրալ, Ակուռի շինալ[1], ժողովուրթին կըտորալ, ուրան էլ պըերալ ըտըեղ կյերի։

Էտ ախճիգյը թաքավերին տըղին մըեխկըն ա կյամ, ասըմ ա. — Ա լուսընդյա ախճիգյ, լաց մի ինիլ, յըես քյըեզ կաղադիմ, մինակ մին խըրեկ հաց տո օտիմ, շատ ըմ սոված։

Էտ տըղան, էտ ըխճըկանը մեխկըն ա կյամ, տանըմ ա ուրան կոշտը, ուտըցընըմ, նըհետը զուրուց անըմ։ Մին էլ ա տըեսնըմ ամարաթը տըեղան տուրուր եկավ։

---

[1] Հիշատակություն Արարատի հրաբխային ժայթքումից տուժած Ակոռի գյուղի մասին (Ս. Բ.)։

Էտ տղան զարմացած հարցրրավ. — Էս հի՞նչ պրեն ա, էս խե՞ յա ամարաթը տրեղան տուրուր կյամ...

Էտ ախճիգյը վախից տրղտողալավ ասից, թա. — Էտ օշափրն ա կյամ, եք քյրեզ կյողլը կրցընիմ։

— Կյողլը կրցընիլրս վրե՞րն ա, վախիլրս վրե՞րրն ա, յրես լհա ընդրա հետի յրմ եկալ։

Օշափը վրեր եկավ էտ տրղին տրեսավ, կրտաղած ասից. — Տու հո՞ւ վրս, ըշտեղա՞ն ըս եկալ, իտի համարծակ ըտրեղ կաղնա՞լ։

— Յրես եկալ ըմ քյրեզ ըսպանիմ, ուրունրտ խրմիմ։

Սրեվ օշափը վրեր տրեսավ էտ տրղան էտ հունարին տաբ ա, ասից. — Մրեր ադաթը իստի յա. առաչ ղոնաղին հացը ըն տամ, ուտուցընրմ ըն, խրմրցնրմ, քրշերը պահրմ, էն մին օրը նրհետը կրռրեվ անրմ։

Ըտրանք իտի էլ անրմ ըն, օտրմ ըն, խրմրմ, թեքյ ընգնում, թա քոն ինին։

Սրեվ օշափին քոնը տանրմ չի՞, մրթկրմը ասրմ ա. — Էս վրեր իմ ախպոր, կյարմուր օշափին հախտալ ա, կարող ա ինձ էլ հախտի, լավրն էն ա, եր կրենամ էս քրշեր ըտրա կրլոխը օտիմ։

Թաքավերին պուճուր տրղան յաման գյիտկան ար, խափիլը տրժեր, դաստի կրլխու ընգավ օշափին մրեթկը։ Ամարաթը վրեր էլհա տուրուր եկավ, էտ տրղան եր թրռավ տրեղան, սորը հանից, յրրա պրրծավ օշափին, հենց թրխից, վրեր կրլոխը տրեղան թրռավ։

Աշխարքրս ասիս լհա դինշացավ, լուսավերվից։ Ըտրա անգուճ-նին էլ կրտորից, տարավ էն ըխճրկանը նշանց տրվավ։ Էտ ախճիգյը վիզավրն ընգավ, պրշպրշորից, կրլոխը սրղալից, ասից. — Եք փրսակվինք, մին տրեղ ապրինք։

Տրղան էտ ըխճրկանն էլ մրեռժից, խոսկը կոտրից, քրշացավ էտ ամարաթին քաշի ատաժնին, հիշքան փրռնած հեյվաննի կար, աղա-գից։ Ըտրանք ուրխացած քյնացին ուրանց պունները։ Ետավ ըտրեղ մին քանի օր մրնաց, էլհա ճրնապարի պադրաստութուն տրեսավ։ Վրեր էտ տրեսավ, ըխճրկանը քյեփը կոտրից։ Տրղան նաղլ ըրավ, վրեր ինքյը նպատակ օնի, բիդի քյինի զառ բուլրուլը պրերի, վրեր երքի, ուրանց բաղը-բախչան կրնանչի։

Վրեր էտ լրսից, ախճիգյը վախից, օղից թա սրերտը նաքի, վրեր տրղան օղրմ ա կրլոխը բադի տա։ Տրղան եշից վրեչ, եր կա-ցավ ճրնապար ընգավ։

Շատ քյինից, թա խրրեգյ, անց կացավ շատ փիս-փիս տրեղե-բավ, մրթեն ծրմակներավ, խոր-խոր ծորերավ, պեցուր սարերավ,

վերջը ընգալ մին սիպտակ վրեզ, մին խրեգյ էլ քյինից, ըտրան առաջը եկավ մին սիպտակ ամարաթ, մարթի կրլխի վրեսկուռնրեբա շինած։ Էտ ամարաթին դըրրըզան պրեց ըրավ, նի մըտավ, տրեսավ մին շատ դաշանգյ ախճիգյ, արևին լուսան էլ իվիլ լուս տրվող, ընգրան շրենքը-շընորքը իրեսկրհատը մին օրիշ պրե՞ն։

Էտ ախճիգյը վրեր էտ տրղին տրեսավ, կրլոխը շոռ տրվավ, օղից թա եր ընգնի, ասից. — Ա՛յ տրղա, ըստրեղ հի՞նչ ըս անրմ, հո՞ւնց ըս եկալ էս օշափներին երգյիրը, դե շուտ ըրա ետ տրեռ, թա չէ սիպտակ օշափը կյալու յա քյրեզ օտի։

Էս խոսկերքը էլհա տրղին քյեփին նի եկավ, ասից. — Ա՛յ ախճիգյ, հալա ինձ ղոնաղ չըս ըրա՞լ, հալա պարյօր-ասծուպարին չըս ասա՞լ, ինձ տուս ըս անրմ։ Ինձ վրխցընրմ ըս սիպտակ օշափավը։ Լավրն էն ա, նաղլ անիս տրեսնամ տո՞ւ հունց ըս ընգալ ըստրեղ։

Ախճիգյը լաց ինելավ նաղլ ըրավ, վրեր ինքը թաքավերի ախճիգյ ա, ամմա էտ սիպտակ օշափը եկալ ա ուրանց երգյիրը պրրիշակ ըրալ, լոխճին կըտորալ, ուրան էլ կյերի եր կալալ։ Էտ ախճիգյը տրղին մրեխկը եկավ, ասից. — Ցրես լհա ըտրա հրետի յըմ եկալ, վրեր ըտրա կրլոխը պուք տամ, քյրեզ աղագիմ, իմաց տո, կյա, կրռեվ անինք։

Տրղան շատ սոված ար, մին լավ հաց կրերավ, քըշտացավ։

Մին էլ տրեսին սիպտակ օշափը կյամ ա մրրթմրրթալավ, լընգլընգալավ, ըրօրվելավ։ Ամմեն վրեննը փոխելիս տափը տուրուր ար կյամ։

Եկավ նի մրտավ տոն, չորս ղոլան վրետ քաշիլավ ասից. — Փու՞հ, էս հի՞նչ մրրթավետ ա կյա՞մ, էս հո՞ւ կա ըստրեղ։

Վեր տրղին տրեսավ վե՞չ արծակ-համարծակ կաղնա՞ծ, շատ ըշրղվից, փընթփրնթաց, ասից. — Տու հո՞ւ վրս, հո՞ւնց ըս ընգալ էս ղոլերքը։

Թաքավերին պուճուր տրղան ասից. — Եկալ ըմ քյրեզ նրհետ կրռեվ անիմ, քյրեզ ըսպանիմ։

Էտ դևը մրտածից, ինքը ուրան նրհետ մրսլրհաթ ըրավ, վրեր էտ տրղան ուրան էրկու ախպորը ըսպանալ ա, ունգուր ա եկալ ըտրեղ հրսալ։

Ընդրանք տուս եկին, վեր տուսումը կրռեվ անին։ Նորաթը էտ օշափինն ար։ Նա ուրան ախպորցան էլ իվիլ օժավ ար։ Իրեք հրետ քյեցավ-յրեկավ թրխից, ամմա տրղան անփորց ազադվից։ Նորաթը հրսավ էտ տրղին։ Նա ըսկսից սորը օշափին կրլխին խրղրցնիլը, օշափին ըսպանից, ընգրա անգուճնին կըտրից, տարավ էտ ըխճրկանը կոշտը։

Ախճիգյը տրեսավ, ուրխացավ։ Էտ տրղին վիզավը փրթաթվից, ասից. — Մրհեկ, յրես քունն ըմ, տու՝ իմը, եք փրսակվինք։

Իրեք օր տրղան մընաց ըտրեղ, մին լավ դինշացավ, մին օր էլ հացի նըստած թառանչ քաշից, տրեղան եր կացավ, ասից. — Ցրես քյընըմ ըմ։

— Ըշտրե՞ղ ըս քյընըմ։ Քյինիլ մի, յրես առանց քյրեղ կարիլ չը՞մ։

— Ցրես նպատակ օնիմ, պիտի կաղարիմ, քյընըմ ըմ զա՛ռ բուլբուլը պրերիմ, վրեր յերքի, մրեր բախչան կընանչի։

Ախճիգյը վրեր լրսից, շատ վախից, վրեր տրղան կրլոխը բադի կրտա, վրեր ըտրեղ քյընա՛ցողը էլ ետ չի տրեռնըմ։ Տրղան կոխկը-հաստոթուն ըրավ։ Ախճիգյը տրեսավ վրեր տրղան ուրա՛ն ասածի յա, սրվրրցրավ, թա հո՞ւնց պիտի զա՛ռ բուլբուլը պրերի՞։

— Կրքյինիս, շատ տրժրրոթունի կքաշիս, ամմա մրհալ չի տինիս, տրժրրոթունին կրկյա՛, անց կենա։ Հարկավեր ա համփերոթուն, խրելք, արկաթե ջան։ Կրհրսնիս մին մրեծ դուզ տրեղի յրա շինած մին մրեծ ամարաթի, պեց տրոնները կրծասկիս, ծասկած տրոնները պեց կանիս, հրսնիս թաքավերին օթախին։ Թաքավերը քոն իլա՛ծ ա ինելու, յավաշ-յավաշ կը պրտրռիս զա՛ռ բուլբուլին օթախին պիլանին, տոռնը պեց կանիս, ղուշը յոր օնիս, տու՛ս կյա՛ս, կյա՛ս։

Էտ տրղան, հինչ վեր էտ ախճիգյը ասալ ար, լոխ կաղարից։

Էտ դա՛ռումը աման զոլա հարայ տրվին. — Հա՛յ, հարա՛յ տարի՞ն, հա՛ տա՞րին, փրոնեցի՞ք։

Էտ տրղան վեչ մին պենի եշից վեչ՝ շուտ ըրավ, առանց ետ եշելի զա՛ռ բուլբուլը ծրեռքին եկավ էտ ըխճրկանը կոշտը։

Ախճիգյը տափան միչև երգյինք ուրխացավ, աշխարքըս ուրա՛ն տրեռավ, փրթաթվից էտ տրղին վիզա՛վը, կոլավրն ընգավ, պըչ-պըչորից։

Ըտրանք խոսկը մին արին՝ մինտեղ քյինին տրղին հայրենիքը։ Լոխ հարուստոթունը՝ վրեսկեն, առծաթը եր կալին, օղտերը պեռնեցին, քյեցին։

Քյեցին, քյեցին, շատ քյեցին, թա խրեգյ քյեցին, հրսին սրեվ աշխարքը, ըշտեղ էտ տրղան սրեվ դևին սպանալ ար, էն մին ըխճրկանը ազադալ։ Ըտեղ էլհա լոխ հարուստոթունը եր կալին, իրեքավ հրզե իլին։

Շատ քյեցին, թա խրեգյ քյեցին, հրսին կյա՛ռմուր դևին աշխարքը, ըշտեղ էտ տրղան սպանալ ար կյա՛ռմուր դևին, էն մին ըխճրկա-

նը աղաղալ։ Ընեղ էլ լոխ հարուստոթունը եր կալին օղտերը պեռ-նեցին, քյեցին։

Մին խիլլա՝ վախտ էլհա քյեցին, հրսին համին էն տրեղը, ըշ-տեղ ախպորցն անա պրժանվալ ար։

Ընեղ էլհա էն պառավ մարթը նստած ար։

Թաքավերին էտ պուճուր տրղան հրրցրրավ.— Ապե՛ր, բա իմ ախպորցաս վեչ մինը եկալ չի՞։ Ախեր մունք պայման ընք կապալ, վեր հու վեր շուտ կյա՝, ըստեղ սպասի, մինչև էն մինունքն էլ կյան։

Էտ պառավ մարթը տրեղան տրմբրհան իլա՝վ, ասից. — Չէ՛, բալա, եկող չիլա՝լ։

Էտ տրղան թա. — Ապեր, դե վեր իտի յա, էս ըխճրկերքը թո-ղիմ քրշտիտ, էս վրեսկավ, անկյին քարերավ պեռնած օղտերը լոխ թողիմ քրշտիտ, յրես քյինիմ իմ ախպորցը հետան, տրեսնամ հի՛նչ տրեռին, տրեսնամ ընդրանց կրլոխը հի՛նչ եկավ, ճակատնին վե՞ր սարի, վե՛ր քարի նի եկավ։

Ասրմ ա, հրղե ինում։ Ճրնապարին հարցրփորց ընելավ քյի-նում ա, քյինում, հրսնում ա մին տան, ընդեղ ղոնաղ ընգնրմ։

Ընեղ հրրցրփորց ա անրմ, թա հո՞ւնց քյիթնի ուրա՝ն ախպորցը։

Տրնատարն ասրմ ա. — էտ պենը մինակ մին թա՝հրա՝վ կարող ըս գյիդա՝ս։ Բեդմա քյինիս ժամին տրուանը մին մատաղ մորթիս, լոխ ղարիբներին կանչիս, մատաղը պրժանիս, բա՝լքա՝ս ընդրանց մեչին էլ քու ախպերք ինին։

Էտ տրղան քյինում ա, ըտրղան մոտիկ մին քաղաք կար, անրմը Շուշի-Ղալա, ըտեղ էլ մին մրեծ ժամ կար, Ղազանչեցունց ժամ ին ասրմ, ընդեղ էտ զա՝ռվա՝ռաղ խաչերավ ժամումը տես եշից, տեն եշից, ըտրա էտ պեցուր կամարներին եշից, լափ էն պեցուր կմբե-թին եշից, տրեսավ յղոնեգյնին ընդեղ պուտուտ-պուտուտ ըն կյամ, լոխ էլ սիպտա՝կ։

Ասից. — Ա՛ յղոնեգնի՞, տրեսնաս իմ ախպորց տեսալ չրք հու։

Էտ յղոնեգյներան մինը լուզու առավ, ասից. — Թաքավերին պուճուր տրղա, տու քու ախպորցըտ քրթնելու յրս, ամմա վա՞յ քու կլոխըտ։

Գյրրա՝գյի օր ար։ Ժողովուրթը ժամը լիգյը։

Վերչը էտ տրղան մատաղ ա մորթում, ժամհարին նրհետ մին տեղ իփում, ուրա՝ն ծրեռքավ մրեսը լավաշին մեչին տնում, կընդ-կընդ պրժենրմ։

Մատաղը պրժանելին վերչումը էտ տրղին միշնա՝կ ախպերը

եկավ, վեր Շուշի-Ղալա քաղաքումը ծառայութում ար նի մտալ Հա-րունանց Տանիյելին քըշտին։

Պուճուր ախպերը վեր ըտրան տըեսավ խտետըն ընգավ. պըշ-պըշորից, հըըցըփորց ըրավ, գյիդա̈ց հունց ա, հունց չի՛, եկավ քյինեցին միշնա̈կ ախպորը խազայինին կօշտը, վեր բասշոտ յոր օնին։

— Իմ ախպոր փողը տո,— ասից պուճուր ախպերը,— հա̈-շիվը վերշացրու, մունք քյինըմ ընք։

Խազայինը ասից. — Դե հի՞նչ ըմ ասըմ, օղըմ ըս եր կալ։ — Ասըմ ա պըրծնըմ, փողը հաշիվ անըմ ծըեռքին տինըմ։

Պուճուր ախպերը միշնա̈կ ախպորը տարավ Շուշի-Ղալա քա-ղաքին մեծ մագազիննին ման ածից, լա̈վ-լա̈վ շօրեր առավ կյեց տըվավ։ Ետավ ինք նան միշնա̈կ ախպերը ճընապար ընգին, քյեցին մեծ ախպորը ճարեցին, իրեքավ հըղե իլին դիրի էն ըխճըկերքը։

Վերշը էրգյա̈ն ճընապա կյա̈լա̈նը եռը հասին ընդեղ, ըշտեղ թողալ ին օղտերին քյա̈րվանը, մին էլ ըխճըկերքը։ Պուճուր ախպերը լոխ նշանց տըվավ, լոխ նաղլ ըրավ։ Մեծ ախպերը նախանձից օղըմ ար թա տրաքվի, վեր ըխճըկորցը պաժին ըրին, էն լոխճան պուճուր, ամմա լոխճան կյեղեցիկ ախճիգյը պուճուր ախպերը եր կալավ, զա̈ռ բո̈ւլբո̈ւլը ծըեռքին։

Ըտրանք ճընապա ընգին ո̈ւրա̈նց քյարվանի նըհետ։ Շատ ար տաք, ծարավը մարթ ար ըսպանըմ։ Շատ քյինա̈լա̈նը եռը հըսին մին կյետի։

Ըտեղ մըեծ ախպերը թա. — Եկիք լըղանանք։

Քյարվանը առաջ ընգա̈վ, ո̈ւրա̈նք մնացին, լըղացին։

Ըտեղ մեծ ախպերը ետ տըեռավ միշնա̈կ ախպորը թաքուն ասից. թա. — Եք մըեր պուճուր ախպորը կյետըմը խեխտինք, զա̈ռ բո̈ւլ-բո̈ւլը մունք տանինք տանք մըեր հոր։

Միշնա̈կ ախպերը ռազի չի կացավ, ասից. — Լա̈վն էն ա, վեր վըննը-ծըեռքը կապինք, աշկերը հանինք, թողինք էս կյետին ղրա-ղին, մունք քյինինք։

Ըտրանք իտի էլ ըրի՛ն։

Վըեր հըսին քյարվանին, էն ըխճըկորցը կօշտը էտ ըխճըկերքը թա. — Պա հո՞ր ա ծըեր պուճուր ախպերը։

Մըեծ ախպերը թա. — Բա ասիլ չը՞ք, կյետըմը լըղընալիս վախտը ճիրըմը խեխտվից, կրեցինք վեչ, թա ազադինք, վա՛յ-վա՛յ մեր պուճուր ախպեր,— սըտըսոտ ո̈ւրա̈նց ծընգները թակե-ցին մեծ նան միշնա̈կ ախպերքը։

Էտ ըխճրկերքը շատ լաց իլին, առռի շատ լաց իլավ լոխճան պուճուր, լոխճան կյեղեցիկ ախճիգյը, զառ բուլբուլը ծրեռքին, ամմա դե էլ ըշտե՞ղ...

Թաքավերը լսալ ար, վեր էն ա տրղերքը կյամ ըն։ Մեծ պադրաստոթունավ, նազիր-վազիրներավ, մրեծամրեծներավ տուս ա կյամ ըտրանց առաչը։

Սաղ քաղաքը վրեննի յրա ար, լոխ օզրմ ին տրեսնան զառ բուլբուլին, լոխճան շատ էլ թաքավերն ար օզրմ տեբսնա, վրեր տինին ուրանց բախչրմը, երք ասի, բախչան կընանչի։

Ամմա վեր թաքավերը տրեսավ պուճուր տրղան կա վեչ, շատ զարմացավ, քար կըտրից թա. — Պա հո՞ր ա ծրեր պուճուր ախպերը։

Մրեծ նան միշնակ տրղան պադասխանեցին թա. — Ա՛ հաբր, բա ասիլ չը՞ս, լըղանալիս վախտը ճըրրմը խեխտվալ ա՞։ Էս ըխճրկորցը մինը իմ կընեգյս ա, մինը՝ միշնակ ախպորս, էս մինն էլ, էս՝ իրեքինջինը քյրեզ հետի ծառա յընք պերալ։

Էն պուճուր ախճիգյը թա. — Սոտ ա, սոտ ըն ասրմ։

Թաքավերը ըտեղ մին պեն կլխու ընգավ, տրխբրվից, ամմա անց կացավ ուրան իսկական ցավին, վեր զառ բուլբուլը երքի, բախչան կընանչի։

Նա կանչից ուրան տրղորցը, թա. — Դե պերիք զառ բուլբուլը մրեր բախչան, վեր երքի, բախչան կընանչի, համ էլ ըսեցեք տրեսնամ հո՞ւ վա պերալ զառ բուլբուլը։

Մեծ ախպերրն ասրմ ա. — Յրես ըմ պերալ։

Միշնակը թա. — Չէ, յրես ըմ պերալ։

Հաբրը մրեծ տրղին ասրմ ա. — Դե վեր տու վրս պերալ, ասի վեր երքի՞։

Մրեծ տրղան հիշքան անրմ ա, զառ բուլբուլը երքրմ չի՞։

Հաբրը մհեգյ էլ միշնակ տրղին ա ասում. — Թա տու վրս պերալ, ասի զառ բուլբուլը երքի։

Միշնակ տրղան հիշքան չըրշարվրմ ա, ամմա զառ բուլբուլը երքրմ չի՞, տուխուր նստած ուրան ղաֆազումը, վեչ օտրմ ա, վեչ խմրմ, օրանցօր մաշվրմ ա, տրեռնրմ մին պրճրռանք։

Մրհեգյ խոսինք, տեսնանք հի՞նչ տեռավ թաքավերին պուճուր տրղան՝ վեննրծեռքը կրպկրպոտած, կյետին ղրաղին եր քրցած։

Անց ա կենրմ մին քանի օր, բիրդան էտ կյետին ճրրերին թաքուհին տուս ա կյամ կյետան, տրեսնրմ էտ տրղին։ Վեր իտի տրեսնրմ ա, մեխկրն ա կյամ, ծրոքրվեննը պեց ա անրմ, աշկերը տինրմ ուրան տրեղը, անմահական ճուր քրսրմ, էտ տրղին լրվրցնը՞մ։

Տըղան օղըմ ա, թա շունրակալ ինի, մին էլ ա տըեսնըմ ճըրերին թաքուհին ընդեղ չի՞, աշկա կորալ ա՞։

Թաքավերին պուճուր տըղան շարունակըմ ա ուրան ճընապան, դիրի ուրան հորը քաղաքը, նի հըսնըմ ըտեղ, ամմա տըկլոր ինելին դարդան հըմանչըմ ա քյինի հորը պալատը։

Նա մին հարուստ մարթի տան ծառա յա նի մընընըմ, ճուր կըրըմ, փեդ կոտրըմ, մին թահրավ կըլոխը պահըմ։

Մին ամիս անց կընալանը ետը էտ քաղաքը մին դըլմըղալ ա ընգնըմ, ժողովուրթը ըսկըսըմ ըն մին պենի հետի պադրաստվիլը։

Էտ տըղան զարմացած հըրցընըմ ա ուրան խազեյինին անա, թա տա հի՞նչ պեն ա։

Խազեյինը ըշղվըմ ա էտ տըղին յրան, ասըմ. — Հիմմար, էշի կըլոխ, բա հալա գյուդում չը՞ս, Սիպտակ թաքավերը եկալ ա ուրան ղոշունավը չադիրնի եր թողալ քաղաքին չորս ղոլավը, օղըմ ա զառ բուլբուլը ետ ինք օնի՞, համ էլ օղըմ ա զառ բուլբուլը պերող տղին տըեսնա։

Էտ տըղան համարծակ, առանց քաշվելի ասըմ ա. — Էս սըհաթըս քյինի թաքավերին կոշտը, ինձ համար մին ծըեռք լավ շոր պեր, մին էլ մին լավ ծի։ Ցըես կըքյինիմ Սիպտակ թաքավերին ջողաբը տամ։ Խազեյինը ասըմ ա. — Դե ծենտ կտրի, տու հի՞նչ ըս, վեր հալա քյինիս Սիպտակ թաքավերին օշափներին նըհետ կըռեվ անի՞ս։

Էտ տըղան շուտ ա անըմ, քյուշան տուս կյամ, տըեսնըմ էն ըն ժողովուրթը ուրուրոցավ ընգած, ուրան մըեծ ախպերն էլ ծի նըստած քյինում ա Սիպտակ թաքավերին օշափներին նըհետ կըռեվ անի։

Նա կըզնըցնըմ ա ախպորը ծին, ասըմ. — Տու եր եք, յըես եր ինըմ, քյինիմ կըռըեվ։

Թաքավերին մեծ տըղան ըտրան կուփի յա տամ, եր քըցըմ, ինքը քյինըմ, տըեսնըմ քաղաքին չորս զոլը սիպտակալ ա չադիրներան։

Ղարավուլչիքյը վեր ըտրան տըեսնըմ ըն, հըրցնըմ ըն, թա ըշտեղ ա քյինըմ։

Ղարավուլչիքը նշանց ըն տամ Սիպտակ թաքավերին չադիրը։ Տա քյինիմ ա նի մընըմ թաքավերին չադիրը, կլոխ տամ մինչև տափը, ասըմ. — Թաքավերը ապրած կըենա, յըես ըմ թաքավերին տըղան, յըես ըմ պերալ զառ բուլբուլը։

Սիպտակ թաքավերը ասըմ ա. — Դե վեր տու վըս, ասի տըեսնամ զառ բուլբուլը հո՞ւնց ըս պերալ, հո՞ւնց ըս համարծակվալ, եկալ իմ թաքավերութունը։

Տղան նաղլ ա անըմ, ասըմ. — Ըսկի հու՛նց, եկի ծըեր երգյիրը, նի մտի ծըմակը, ծառին յրիցը եր կալի զա̈ռ բո̈ւլբո̈ւլը, եկի՛։

Սիպտա̈կ Թաքավերը տըսավ, վեր տա չի զա̈ռ բո̈ւլբո̈ւլը պերողը, ասից. — Տու չըս զա̈ռ բո̈ւլբո̈ւլը պերողը, քյինա ռադ իլ ըստըզերօան, թա օզըմ չըս կլո̈խտ պուք տանք։ Համ ասըմ ա, համ էլ հրամմայըմ գյա̈դո̈ցը ըտրան մին լա̈վ Թակըմ ըն։

Միշնա̈կ ախպերը տըսնալավ վեր մեծ ախպերը ճարթըփուշուր իլա̈ծ ա եկա՛լ, հորն ասըմ ա. — Ա՛ հա̈ր, յըես քյըեզ ըսեցի վեչ՛, վեր յըես ըմ ղուշը պերալ, յըես էլ կքյինիմ պադասխան կըտամ։

Տա զենքը զրահը յոր ա օնըմ, ծի նստիմ, կյամ Սիպտա̈կ Թաքավերին կոշտը։ Ծընապարին էլհա պըտահըմ ա պուճուր ախպորը, ո̈ւրո̈ւր ճընանչըմ չըն, էլհա պուճուր ախպերը խնԹըըմ ա, վեր ծին տա ո̈ւրա̈ն, ինքը քյինի Սիպտակ Թաքավերին պադասխանը տա։ Էտ վախտը միշնա̈կ ախպերը ըտրան մին լա̈վ Թխից ո̈ւրա̈ն ղամշավը, ծին քըշից։ քյինից, հըսավ Սիպտա̈կ Թաքավերին չա̈դիրին, նի մըտավ, կըլո̈խ տըվավ Թաքավերին, ասից. — Յըես ըմ Թաքավերին տըղան, յըես ըմ պերալ զա̈ռ բո̈ւլբո̈ւլը։

Թաքավերն ասից. — Դե վեր տու վըս, նաղլ ըրա, տըեսնամ հունց ըս պերալ զա̈ռ բո̈ւլբո̈ւլը իմ աշխարքաս, վեր օցն ո̈ւրա̈ն պոռտավը, ղուշն ո̈ւրա̈ն Թեւավը կարըմ չի, Թա նի մըննի՛։

Տըղան ասըմ ա. — Նի մըտի ծըմակը, ծառը պըցրա̈ցի, ղուշը ո̈ւրա̈ն պո̈ւնա̈ն հանեցի, պերի։

Սիպտա̈կ Թաքավերը էլհա Թո̈ւմդըմը ըջըղվից, մի լա̈վ սիլլա̈ տըվավ էտ տըղին, սոտ ըոեյի հետի։ Տըղին օշը տարավ, եր ընգա̈վ։ Մին Թա̈հրա̈վ իրեսին ճո̈ւր շաղ տալավ ետ պերին։

Էս դո̈նըմ Սիպտակ Թաքավերը ա̈րո̈ւմը աշկերը կալած, կըտաղած հրամմայից, ասից. — Մին սըհաԹ վախտ ըմ տինըմ, Թա ղուշը պերողին ղըրկիք։ ղըրկիք, Թա չէ։ քարը քարին յրան չի մնա՛լ էս քաղաքըմը, մին շո̈ւնչ չի մնա՛լ, լոխճին կըկըտորիմ։

Խաբարը կյամ ա հըսնըմ էս Թաքավերին, ժողովուրԹը ըսկըսըմ ըն լա̈ցըկոծ անիլը, փախուստը։

Թաքավերին պուճուր տըղան փեդ ար կուտրատըմ, վեր տեսավ ո̈ւրա̈ն խազեյինը օզըմ ա փախչի, հրցրավ, ասից. — Էտ հի՛նչ ա՛ պըտահալ, էտ խե՞ փախչըմ ըք։

Ըտեղ խազեյինը յրան կըզնվից, հրամմայից Թա. — Շո̈ւտ ըրա, տու վէլ մին տեղ կյոզըլ կաց, Թա չէ Սիպտա̈կ Թաքավերը էս ա մեր աշխարքը օրա̈ն-վերանա յա անելու, լոխճին կուտորելու յա։

Տըղան ուրան խաղեյինին սըերտ տըվավ, ասից. — Քյինա թաքավերին կոշտը, ասի մին ծրեռք շոր, մին ծի, զենքը-զրահ տա, յըտս քյինիմ պադասխանը տամ։

Ըտեղ խազեյինը թունդըմը ըշըղվից ըտրա յրա, շալա-քուլան հվաքից, փախավ։

Էտ տըղան լոխ վեր իտի տըեսավ, որոշից ինքը քյինի թաքավերին կոշտը ծի, զենք յոր օնի, քյինի Սիպտակ թաքավերին ջողարը տա՞։

Իտի էլ ըրավ, խոնարվից, կլոխ տըվավ, ասից.— Թաքավերը ապրած կենա, ինձ մին ծրերք շոր տո մին ծի, զենք-զըրահ, յըես քյինիմ Սիպտակ թաքավերին պադասխանը տամ։

Թաքավերը էտ տըղին անա մնաց արմանք զարմանք տարած, անգուճին հրվատաց վեչ, մին էլ մըթկըմը ասից թա՝ ջըհաննամը, բալքաս դուզ ա ասըմ։

Ետ տըեռավ էտ տըղին, թա.— Դե վեր իտի յա, քյինի տու հավան կաց ծիյին, շորերին, զենք-զըրահին, կյեց, ծի նըստի, քյինա։

Էտ տըղան, թա.— Դե վեր իտի յա, թաքավեր, քու առաջիտ մին պայման ըմ տինըմ։ Թա կարեցի պադասխանը տամ, տու մին քանի օր թաքավերութունըտ պիտի ինձ տաս, յըես դադաստան օնիմ մին քանի մարթկանց նըհետ, իմ ծրեռքավըս պիտի կադարիմ։

Թաքավերը ռազի յա կըենըմ։

Տըղան հաքնըվըմ ա, ծի նըստըմ, քյինըմ Սիպտակ թաքավերին կոշտը։ Ըտեղ ղարավուլչոցը անա հըրցըփորց ըրավ, գյիդաց, թա ըշտեղ ա ընգրա չադիրը, ծին քըշից, հըսավ ըտեղ, նի մըտավ, առանց կլոխ տալի առաջին կաղնից։

Թաքավերը ըտրա յրան ըշըղվից, ասից. — Տու հո՞ւ վըս, վեր իմ առաջիս կըլոխտ խոնարըմ չը՞ս։

Էտ տըղան թա. — Ցրես զառ բուլբուլը պերող տըղան ըմ, էս քաղաքին թաքավերին պուճուր տըղան, կըլոխս յոր չօնըմ, վեր քու առաջիտ խոնարիմ, թա կըռըեվ ըս օզըմ, աշկիս յրան, կըլխիս յրան, եկ կըռըեվ անինք։

Սիպտակ թաքավերը ըշըղվից, ուրան թըփըհարից, ասից.— Դե վեր իտի համարծակ ըս, պատմի տեսնամ հո՞ւնց եկիր իմ երդյիրըս, հո՞ւնց ղուշը պըերիր։

Տըղան լոխ նաղլ ըրավ։ Սիպտակ թաքավերը համոզվից, վեր էտ ա պերալ զառ բուլբուլը։ Ըշըղվից, օղից թտ տըղին ըսպանի, մին էլ ասից։ — Դե վեր իտի յա, հունցը պերալ ըս, ինդի էլ տար տիր ուրան տեղը, թա չէ, ծեր երդյիրը տըկրկլոխ կանիմ։

Էտ խոսկերքին յրան տըղան ծրծաղից, ետավ ինքը ուրան հրվաքից, նետը սաղ ըրավ դիրի թաքավերը, յրա ըրավ։ Թաքավերը մին պենդ կյոռռաց, եր ընգավ։

Էտ կյոռռոցը վեր ղոշունը լըսից, ըսկսից փախչիլը, ըշտըղան եկալ ար, քյեցավ ընդեղ։

Խաբարը հըսավ թաքավերին, վեր էն տըղան ըսպանալ ա Սիպտակ թաքավերին, աղադալ ժողովուրթին։

Թաքավերը մըեծ պադրաստոթունավ, պադարկաներավ քյինըմ ա էտ քաշ տըղին առաչը, յոր օնըմ կյամ պալատը։

Էտ վախտը տըղան թաքավերան հրրցըրավ, թա. — Ճընանչը՞մ ը՞ս ինձ։

Թաքավերը թա. — Չէ՛։

Տըղան թա. — Յրես քու տրղատ ըմ, քու պուճուր տրղատ։

Թաքավերը մաթ մնաց, կըլոխը շոռ տըվավ, օղից, թա եր ընգնի՞։ Մին էլ օշը կըլոխը հըվաքից, ասից. — Դե վեր տու իմ տըղաս ըս, եք զառ բուլբուլը խոսիլ, երգել տո, վըեր մըեր բախչան կընանչի։

Տըղան քյինաց էն օթախը, ըշտեղ ղուշն ար, ընդրան ղաչաղիցը հանից, կլոխ տըվավ ընդրան, խընթրից, վըեր երգի։

Զառ բուլբուլը թըփհարից թևերը, օրախ-օրախ ըսկսից երգ ասիլը։

Բախչան կընանչից, օթը լավացավ, ղուշերը ըսկըսեցին երգիլը։

Թաքավերը ուրխացավ, խտտից ուրան տըղին, ասից. — Դե վեր տու իտի քաշ ըս, իմ տըղաս ըս, ինք առ իմ թաքավերոթունըս քյըեզ, հինչ օզըմ ըս, ըրա։

Տըղան հորը կահը եր կալավ, ըսկսից ուրան կըլխավը անց կացածը նաղլ անիլը։

Կողի խընթրալ ար, վեր թաքավերոթունը ուրան տա, ուրան ախպորցը դիվանը անի՞, ամմա մին էլ խղճաց ընդրանց, ասից. — Ա՛ հաբ, քանի վեր ընդրանք ինձ սաղ ըն թողալ, յրես էլ ուրանց սաղ կրթողի՞մ, խընթըրմ ըմ հրամմայիս, վեր էս երգյիրան հեռանան, ուրանց խոխա-ռախան յոր օնին քյինին։

Իդի էլ իլավ։ Էտ օրվանից թաքավերին էրկու տըղերքը հեռանըմ ըն էտ երգյիրան, թա ըշտեղ ըն քյինըմ, հալա միչև մըհեգ էլ խաբար չիկա։

Սաղ աշխարքըս էտ օրվանից կընանչից, ծաղկից, ժողովուրթը ուրխացավ...

Թաքավերին պուճուր տըղան փըսակվից էն լոխճան պուճուր, լոխճան կյեղեցիկ ըսճըկանը նըհետ։ Օխտը օր, օխտը քըշեր հըրսա-

նիք ըրին։ Ըտրանա ետը տըղան մնաց ո՛ւրա՛ն հօրը կահին, ըսկսից երգյիրը լա՛վ կառավարիլը։ Ուրա՛ն ժողովուրթին նըհետ բախտավեր ապրիլը։

Երգյինքան իրեք մըեծ, տեղին ռա՛նգյի, մին ղոլըն էլ կյա՛րմուր շա՛վթա՛լի եր ընգավ. մինը՝ ասողին, մինը՝ լըսողին, մինն էլ՝ կար-թողին։